

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈՐ ՏՈՒԵԱԼՆԵՐ
ԱՐԻՍ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԱՍԻՆ
(ԻՍՐԱՅԷԼ ՏԵՐՈՒՆԻ)

1902ին շրջանաւարտ Մուրատ-Ռափայէլեան վարժարանէն, կ'անցնի ֆրանսայի Նանսի քաղաքը, ուր կը հետեւի երկրագործական եւ հողատնտեսութեան մասնագիտութեան. յաջողութեամբ աւարտելով, տեղւոյն վրայ կը պաշտօնավարէ ատեն մը՝ իբրեւ քանիչ մասնագէտ:

Նանսիէն կ'անցնի Ամերիկա, 1905ին, ու կ'աշխատակցի «Հայրենիք»-ի խմբագրութեան:

1910ին կը վերադառնայ Թիւրքիոյ Բեգէ քաղաքը. հազիւ հասած, կը կորսնցնէ մայրը. անկէ կ'անցնի Պոլիս եւ հոն կը մնայ մինչեւ կոտորածը:

Պոլսոյ մէջ մաս կը կազմէ «Ազատամարտ»-ի խմբագրութեան, միաժամանակ կը զբաղի ուսուցչութեամբ՝ Կեդրոնականի եւ այլ վարժարաններու իբր այցելու ուսուցիչ:

Եղած է քաջ աշխարհագէտ:

1915ի կոտորածի միջոցին, իր եղբայրը Գրիգոր (ան ալ Մուրատ-Ռափայէլեանի նախկին աշակերտ), քանի մը անգամ կ'ազատէ Արիսը ջարդարարներու ձեռքէն: Ասորի շրջանին, Արիս կը հանդիպի քուրճ զինուորի մը ղեկավարին. անոր հագուստները հագուելով եւ ինքնութեան քուրճն ալ իր վրայ առնելով, ինքզինքը կը պահէ շատ դժնդակ պայմաններու մէջ:

1918ին հիւանդանոցով, Պալատէֆի հիւանդանոցը կը փոխադրուի, եւ հոն կը մեռնի, օտար զինուորի մը անունին տակ:

Իր վերջին նամակը, գրուած իր Գրիգոր եղբոր, կ'ըլլայ 1918ի Սեպտեմբերին:

Դժբախտաբար կորսուած է այդ նամակը:

«Բազմավէպ»-ի խմբագրութիւնը, Արիս Իսրայէլեան (Իսրայէլ Տիւրուհի) բանաստեղծի ազգականներէն ստանալով վերոյիշեալ ծանօթութիւնները, ինչպէս նաեւ բանաստեղծին զոյգ նամակները, հաճոյքով կը հրատարակէ զանոնք, ու կը յանձնէ հայ զբաղանքութեան պատմութեամբ զբաղող մասնագէտներու ու շարժումներու, նաեւ իրական շխարհի մը եւս փրկելով կորուստէ եւ մոռացութենէ:

Ձեռնարկէն շնորհակալ ենք մեզի տրամադրուած տեղեկութիւններուն եւ նամակներուն համար:

Նամակներէն առաջինը գրած է հայիւ Թիւրքիա հասած, 1910ի Ապրիլ ամսուն. իսկ երկրորդը, երկու ամիս ետք, իր մայրիկին մահուան տխուր տպաւորութեան տակ:

Նամակներուն մէջ յիշուած անձերու մասին քաջած ենք հետեւեալ տեղեկութիւնները.

Գարեգին Շահլամեանը Արիս Իսրայէլեանի կնքհայրն է, որ 1910էն առաջ զտնուած է Մարտէլ. վախճանած է 1941ին: Շահլամեան ընտանիքը եղած է Իսրայէլեան ընտանիքին կնքհայր, հնուց ի վեր, սերունդէ սերունդ: Շնորհիկը՝ Գարեգին Շահլամեանի կինն է, այժմ կը զտնուի Մարտէլ: Փեքրոն կնքաքոյրը՝ Գարեգին Շահլամեանի քոյրն է, որ ամուսնացած է Ղազար Չալքեանի հետ (Ղազար փեսան). երկուքն ալ վախճանած են: Լեւոնը՝ տղան է Ղազար եւ Փեքրոն Չալքեաններու. այժմ կը բնակի Մարտէլ:

Ռուբէն կնքհայրը՝ մեծ եղբայրն է Գարեգին Շահլամեանի: Ազնիւը՝ Ռուբէն կնքհայր կինն է. մեռած է հիւանդութեամբ, մեծ եղբունէն առաջ:

Պերմը՝ Ռուբէն կնքհայր եւ Ազնիւի տղան է. մեռած է մեծ եղբունէն առաջ:

Ղեւոնդ մօրբուրդին որեւէ կապ չունի Իսրայէլեաններու հետ: Տիգրանը՝ Չիօկիւրեանն է, նահատակ զրազէտ, որ Գարեգին Շահլամեանի չորս տղան է:

Եղիշէն՝ Թորոսեան, Շահլամեան Գարեգինի միւս չորս տղան է, որ մեռած է Հայաստան (ներգաղթած 1936ին):

Օննիկը, եղբայրն է զրազէտ Տիգրանին, նահատակ:

Արիս Իսրայէլեանի մօր անունը Հռիփսիմէ:

Արիսինք եղած են հինգ եղբայր եւ երկու քոյր. եղբայրները՝ Հաճի Նշան, Նազարեթ, Փառնակ, Գրիգոր, Արիս. քոյրերը՝ Հաճի Մարիամ, եւ ... ամուսնութեան մականունով Այվաղեան:

Արիսի եղբայրը Գրիգոր, մեռած է Մարտէլ 1947ին: Տիգրանը կը կոչուի Հայկունի (որ աղբիւրն է այս տեղեկութիւններուն). ունի երեք մանչ զաւակներ, լաւ զիբքերու հասած:

ԽՄԲ.

* * *

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐԻՍ ԻՍՐԱՅԷԼԵԱՆԷՆ

26 Ապրիլ (ը. ք.) 1910 Բեգէ

Մեծապատիւ

Պրն. Գարեգին Շահլամեան
Մարտէլ

Ձեզմէ բաժնուած ատենս որքան որ կ'ըսէի թէ չարաթ մը Պոլիս կը մընամ, սակայն Պոլիս հասնելուս՝ տեսաի մը զգուշ զգացի այդ քաղաքին հանդէպ եւ երկու օր միայն մնալով հոն՝ մեկնեցայ Տրապիզոն:

Պոլսոյ մէջ կարդ մը ընկերներէ զատ՝ ջանացի տեսնել մեր Տիգրանը եւ այդ նպատակով Իսկիւտար գացի. զժրախտաբար այդ օրերը վաղանաւ ըլլալուն, Տիգրանը եւ Եղիշէն զպրոցը չէին, հաւանաբար Տիգրանի հարսընցուն տունը գացած էին: Թէպէտ հասցէս ձգեցի զպրոցը որ Տիգրանը գայ եւ զիս գտնէ, բայց հակառակ իր փնտռութիւններուն՝ դարձեալ չի կրցանք զիրար տեսնել:

Երրորդ օրը երբ մեր նաւը Սամսունէն կը մեկնէր դէպի Տրապիզոն, վերնայարկին վրայ տեսայ երիտասարդ մը, որ կծկուած նստած էր. հար-